

թրիսն ուտէր» Տերենտի, եւ յետոյ «ընդ
գինիս մտին» (նոյն, 232): Նաեւ Ղեւոն-
դեանք յառաջ «հաղորդեցան ի կերակուրն»,
եւ յետ աւարտման բերին «զուրախու-
թեան նուագն» կամ բաժակը (Եղիշ. 133),
զոր պիտի տեսնենք իւր կարգին: Եւ ժԲ
դարուն Շնորհալին կը հաստատէ տակա-
ւին, թէ «յորժամ զրաւ լինիցի կերա-
կրոյն՝» այն ժամանակ կը սկսէր գինին,
որուն «մինչ յերիս միայն արբումն բա-
ժակի՝» քահանայն մեկնեւու էր (աստ,
141). ուրեմն ասկից յառաջ բնաւ գինի
չէր խմուած: Յար եւ նման էր Յունաց
սովորոյթն ալ (Դար. Ա, 1275), այս տար-
բերութեամբ՝ որ անոնց գինարբուքը ճա-
շին հետ անհրաժեշտ չէր միշտ, ինչպէս
մեր քով էր. անոնք կրնային նաեւ ճաշել
բարեկամի մը տան մէջ, եւ գինարբու-
թեան համար հաւաքուիլ այլուր (անդ,
1373): Իսկ Հռովմայեցիք գինին թէ ա-
ռանձին եւ թէ կերակրոյ հետ խառն կ'ըմ-
պէին (անդ, 1281). թէեւ միջին դարու
Հայոց դաշտային գինարբութիւնք եւս
(աստ, 49) ճաշին հետ անվրէպ կապ ու-
նենալ չեն թուիր: